Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Գեղակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ի աշխարհագրություն 8 դասաժամ և մաթեմատիկա 12 դասաժամ ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլը անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետհարցազրույցը անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

–դիմում /Ձե 1/, մեկ լուսանկար 3Х4 չափի,

–բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,

–անձը հաստատող փաստաթուղթ,

–«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26–րդ հոդվածի 1–ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,

–ինքնակենսագրություն /Ձև 5/

–այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ–ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

–ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

–հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,

–որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված համապատասխան փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում : Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը

ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև ընդունման ժամկետի ավարտը համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Փաստաթղթերը ընդունվում են նոյեմբերի 15–ից մինչև 28 ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00–ից 15:00–ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **նոյեմբերի 30–ին՝ ժամը 14:30–ին,** ՀՀ Արմավիրի մարզի Խոյ՝ Գեղակերտ, Մաշտոցի 22: Հեռախոս 098596594 , 055596594